



**ԱՌԱՋՆՈՐԴԱՐԱՆ ՀԱՅՈՑ**  
**ՀԻՄՆԻՍԱՅԻՆ ԱՄԵՐԻԿԱՅԻ ԱՐԵՄՍՏԵԱՆ ԹԵՄԻ**  
**WESTERN PRELACY**  
**OF THE ARMENIAN APOSTOLIC CHURCH OF AMERICA**  
**H.E. ARCHBISHOP MOUSHEGH MARDIROSSIAN, PRELATE**  
Tel: 818-248-7737/8, Fax: 818-248-7745  
E-mail: [Prelacy@aol.com](mailto:Prelacy@aol.com) Website: [www.westernprelacy.org](http://www.westernprelacy.org)



**ԱՌԱՋՆՈՐԴ ՍՐԲԱՉԱՆԸ ԸՆԴՈՒՆԵՑ ՀԱՅԱՍՏԱՆԻ  
ՏՆՏԵՍՈՒԹԵԱՆ ՆԱԽԱՐԱՐ ՆԵՐՍԵՍ ԵՐԻՑԵԱՆԻ ԱՅՅԵԼՈՒԹԻՒՆԸ**

Չորեքշաբթի, 17 Սեպտեմբերի երեկոյեան, Թեմիս բարեխնամ Առաջնորդ Բարձր. Տ. Մուշեղ Արք. Մարտիրոսեան ընդունեց այցելութիւնը Հայաստանի տնտեսութեան նախարար Ներսես Երիցեանի, որ պաշտօնական այցելութեամբ Լոս Անճելըս կը գտնուի: Յարգելի նախարարին կ'ընկերանային Հայաստանի գլխաւոր հիւպատոս Տիար Արմէն Լիլոյեան, նախարարական պատուիրակութեան ու Հայաստանի հիւպատոսութեան անձնակազմի անդամներ:

Առաջնորդ Սրբազանին կողքին, հայրենի նախարարի հիւրընկալման մասնակեցան Թեմիս Կրօնական Ժողովի ատենապետ եւ փոխ ատենապետ Գերայ. Տ. Միւռն Ծ. Վրդ. Ազնիկեան, Զոգշ. Տ. Պարթեւ Վրդ. Կիւլիւմեան եւ Ազգային Վարչութեան անդամներէն Տիար Խաչիկ Երեցեան:

Հանդիպումը առիթ եղաւ խորհրդակցելու Հայաստանի դիմագրաւած հարցերուն եւ իրագործումներուն մասին, մանաւանդ որ մեր ժողովուրդը քանի մը օրէն պիտի տօնէ Հայաստանի հանրապետութեան անկախութեան վերահաստատման տարեդարձը: Հիւր նախարարը ընդհանուր գիծերու մէջ տեղեկութիւններ տուաւ հայրենիքի իրագործումներուն ու մարտահրաւերներուն մասին: Ան մանրամասնօրէն խօսեցաւ Հայաստանի տնտեսական բարգաւաճման ու աշխատանքի արդիականացման կարելիութիւններուն մասին, նշելով, որ հայրենի պետութիւնը ծրագիրներ մշակած է, որպէսզի Հայաստան դառնայ մրցունակ երկիր, անոր պետական, կրթական ու այլ համակարգները որդեգրեն արդի արհեստագիտութեան միջոցները:

Խօսակցութեան նիւթ դարձան այն հանդիպումներն ու գործակցութեան ծրագիրները, որոնք մաս կը կազմեն յարգելի նախարարին Լոս Անճելըս առաքելութեան:

Առաջնորդ Սրբազանը, իր կարգին, լուսաբանութիւններ տուաւ մեր 35ամեայ թեմի կտրած հանգրուաններուն ու ծառայական դաշտերուն մասին, որոնք կը կիրարկուին գլխաւորաբար եկեղեցիներուն ու ազգային վարժարաններուն ճամբով: Ան նաեւ խօսեցաւ Ազգ. Առաջնորդարանի յարկին ու հովանիին տակ տարուող ծառայական աշխատանքներուն մասին, ընդգծելով միաժամանակ, թէ Զաւիթորնիոյ ու ընդհանրապէս Միացեալ Նահանգներու հայութիւնը մօտէն կը հետեւի Հայաստանի իրադարձութիւններուն եւ հոգուով ու գործքով զօրավիգ է անոր բարգաւաճման ու կայունութեան պահպանման ճիգերուն:

Հրաժեշտի պահուն, Առաջնորդ Սրբազանը եւ հիւր նախարարը յուշանուէրներ փոխանակեցին, ապա նաեւ՝ այցելեցին Ազգ. Առաջնորդարանի նոր շէնքի տարբեր բաժանմունքները:

## **PRELATE WELCOMES VISIT OF ARMENIA'S MINISTER OF ECONOMY NERSES YERITSYAN**

On the afternoon of Wednesday, September 17<sup>th</sup>, Armenia's Minister of Economy H.E. Nerses Yeritsyan paid an official visit to the Prelacy, where he was welcomed by H.E. Archbishop Moushegh Mardirossian, Prelate, as well as Religious Council Chair Very Rev. Fr. Muron Aznikian, Religious Council Vice-Chair Very Rev. Fr. Barthev Gulumian, and Executive Council member Mr. Khatchig Yeretian. Among the delegation accompanying Mr. Yeritsyan was Consul General the Honorable Armen Liloyan and ministry and consulate staff.

During their meeting the Prelate and guests discussed the challenges Armenia has overcome, with Mr. Yeritsyan detailing the economic progress the republic has experienced and current efforts to further modernize the system to make Armenia a competitor in the global economy. Mr. Yeritsyan concluded by speaking on the purpose of his current visit to Los Angeles.

The Prelate then spoke of the mission of the Prelacy and achievements since its establishment 35 years ago, including the endeavors of our churches and schools. In conclusion, the Prelate reasserted the commitment of the Armenian community of California and of the United States in general to the welfare of Armenia, and actively contributes to the prosperity of our nation.

The meeting ended with the exchange of mementos, following which the guests were given a tour of the headquarters.